Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
սեպտեմբերի 28-ի նիստի N 41
արձանագրային որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ներածություն

1. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ռազմավարությունը և ֆինանսավորման ծրագիրը (այսուհետ՝ Ռազմավարություն) հավանության է արժանացել ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 13-ի նիստի N 38 արձանագրության 17-րդ կետով և ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի նիստի N 6 արձանագրության 26-րդ կետով Ռազմավարությունում կատարվել են համապատասխան լրացումներ և փոփոխություններ:

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն (այսուհետ՝ ՋՏՊԿ) իրականացրել և շարունակում է աշխատանքները Ռազմավարությամբ (մասնավորապես աղյուսակներ 4.1-ում և 4.2-ում) նախատեսված համապատասխան գործողությունների և միջոցառումների կատարումն ապահովելու ուղղությամբ:

2. ՋՏՊԿ-ն, Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) խորհրդատուների աջակցությամբ, կատարում է Ռազմավարության իրականացման ուսումնասիրություններ և նախատեսում է փոփոխություններ՝ հաշվի առնելով ներկա զարգացումները և հիմնախնդիրները: Մասնավորապես, Ռազմավարությունում նախատեսվում է որպես առաջնահերթություն ապահովել նաև միասնական վարձակալի՝ <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից չսպասարկվող շուրջ 570 բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման (ՋՄ և ՋՀ) ծառայությունների բարելավման վերաբերյալ ներկա պահանջները:

3. Ստորև ներկայացվում են Ռազմավարության աղյուսակներ 4.1-ում և 4.2-ում ամրագրված գործողությունների և միջոցառումների 2015-2017թ.թ. ժամանակահատվածում իրականացված արդյունքները և հետագա անելիքները:

Աղյուսակ 4.1

1. Իրատեսական ներդրումային պլանի որոշում

1.1 Քննարկել ջրային ոլորտի 2016-2030թթ. ժամանակահատվածում իրատեսական կապիտալ ծախսերի հարցը, որոշելու դրանց առաջնահերթությունների և նախնական բաշխման շուրջ չորս <<քառորդների>> միջև (ՋՄ և ՋՀ մասնաբաժիններ) բաշխումը:

ՋՏՊԿ-ի երեք հիմնական առաջնահերթություններն են.

- Վարձակալության պայմանագրի շրջանակներում սպասարկվող տարածքների բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում.
- Վերը նշված սպասարկման տարածքից դուրս գտնվող, չսպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում.
- Կեղտաջրերի մաքրման բարելավում:

ՋՏՊԿ-ն իրականացնում է աշխատանքներ՝ միջազգային ֆինանսական կազմակերպությունների (ՄՖԿ) հետ կնքված համաձայնագրերի շրջանակներում շուրջ 100 մլն Եվրո գումարով ներդրումային ծրագրերը ապահովելու համար՝ 2017-2021թթ.-ի ժամանակահատվածում սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման ենթակառուցվածքների բարելավման և զարգացման նպատակով:

Վարձակալության պայմանագրի շրջանակներում <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն պարտավորվում է 2017-2031թթ.-ի ընթացքում իրականացնել պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիր (ՊԿԱԾ)՝ առնվազն 37 մլրդ 500 մլն ՀՀ դրամ (շուրջ 80 մլն ԱՄՆ դոլար[1]) արժեքով, որպեսզի իր սպասարկման տարածքում ենթակառուցվածքներն հասցնի ավելի բարելավված վիճակի, քան դրանք ներկայումս կան: Տարեկան ներդրումները պետք է կազմեն առնվազն 1 մլրդ 500 մլն ՀՀ դրամ՝ 2017թ.-ին և 1 մլրդ 750 մլն ՀՀ դրամ՝ 2018թ.-ին, իսկ այնուհետև տարեկան 2 մլրդ 750 մլն ՀՀ դրամ՝ 2020-2027թթ.-ին, որից հետո մինչև 2031թ. դրանք կկազմեն տարեկան 2 մլրդ 500 մլն ՀՀ դրամ:

ՊԿԱԾ-ի միջոցների շուրջ 85% պետք է բաշխված լինի ըստ առանձին գույքի միավորների և /կամ օբյեկտների, իսկ 15%՝ չնախատեսված կապիտալ ծախսերի իրականացման համար:

Վարձակալության պայմանագրով <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի համար, որպես հիմնական կատարողական ցուցանիշ (ՀԿՑ) սահմանված է նաև չհաշվառվող ջրի ծավալների կրճատում՝ 30%-ով:

Ներկայում ՋՏՊԿ-ն իրականացնում է աշխատանքներ չսպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի կառավարման հետ կապված հարցերի կարգավորման ուղղությամբ:

1.2 Բանակցություններ վարել ներդրումային գումարի համար դոնորի աջակցությունը ստանալու (առնվազն սկզբունքորեն) և գումարի բաշխման նպատակով, ելնելով ՀՀ կառավարության կողմից սահմանված առաջնահերթություններից:

ՀՀ կառավարությունը ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի համար 2017թ. ապահովել է 6 մլրդ 684 մլն ՀՀ դրամ գումարով ֆինանսական միջոցներ ՄՖԿ-ների կողմից և 1 մլրդ 533 մլն ՀՀ դրամ գումարով համաֆինանսավորում՝ ոլորտի ներդրումների ընդհանուր գումարը հասցնելով 8 մլրդ 217 մլն ՀՀ դրամի:

1.3 Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտը կանոնակարգող շինարարական նորմերում կատարել Ռազմավարությունից բխող անհրաժեշտ

[1] Արտարժույթի փոխարժեքը 2017թ.-ի մայիսի 9-ի դրությամբ. 1 ԱՄՆ դոլար = 485 ՀՀ դրամ, 1 Եվրո = 530 ՀՀ դրամ

փոփոխություններ և լրացումներ՝ դրանք միջազգային լավագույն կիրառելի պրակտիկային համապատասխանացնելու նպատակով:

Այս հարցերի կարգավորման համար պահանջվում են համապատասխան աշխատանքներ և երկարատև ժամանակ: Այդ իսկ առումով, <<Ենթակառուցվածքների կայունության աջակցության ծրագիր. Երկրորդ փուլ (ընթացիկ գործառնություններ)>> վարկային համաձայնագրի (ԵԿԱԾ2) շրջանակներում ԱԶԲ-ի տեխնիկական աջակցության խումբը (ՏԱ խումբ) իրականացրել է առկա վիճակի և բացերի վերլուծություն, որպեսզի հստակեցնի շինարարական նորմերի ու դրանց իրագործման հետ կապված այն հիմնախնդիրները:

Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտների մասով իրականացվել է ներկայում կիրառվող շինարարական նորմերի համեմատություն լավագույն պրակտիկայում օգտագործվող նախագծման ստանդարտների հետ՝ հիմնականում շեշտադրելով այն ցուցանիշները, որոնք զգալի ազդեցություն են ունենում շինարարական ծախսերի վրա: 2017 թվականի հունիսին հաշվետվության նախագիծը ներկայացվել է ՋՏՊԿ-ին և մյուս շահառուներին:

ՋՏՊԿ-ի կողմից ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեին (այսուհետ՝ ՔՊԿ) ներկայացվել է ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի շինարարական նորմերում առկա բացերի վերաբերյալ հաշվետվություն:

2. Սակագներ

2.1 ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 883-Ն որոշման համապատասխան դրույթների իրականացման նպատակով նախապատրաստել առաջարկություն լրիվ ինքնածախսածածկվող սակագնին անցման փուլի տևողության և ձևի վերաբերյալ՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության ֆինանսական աջակցության և առկա վարկերի պարտքի սպասարկման մակարդակները:

Վարձակալության պայմանագրի 7-րդ հոդվածում սահմանված է, որ վարձակալը մեկնարկային օրվանից լիցենզիայով նախատեսված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունները մատուցում է բաժանորդներին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ ՀԾԿՀ) կողմից սահմանված սակագներով և պայմանագրերի օրինակելի ձևերին համապատասխան: <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից սպասարկվող բաժանորդների համար ՀԾԿՀ-ի 09.12.2016թ. N 398Ն որոշմամբ սահմանվել են միասնական սակագներ: Դրանք են՝ 180 դրամ/մ^3՝ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների համար, որից 153 դրամ/մ^3՝ ջրամատակարարման և 27 դրամ/մ^3՝ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համար: Այս սակագները մոտ են <<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի և <<Լոռի-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի համար նախկինում գործող սակագներին, մի փոքր ավել են <<Երևան Ջուր>> ՓԲԸ-ի և <<Շիրակ-ջրմուղկոյուղի>> ՓԲԸ-ի նախկին սակագներից և զգալիորեն ցածր են <<Նոր Ակունք>> ՓԲԸ-ի նախկին սակագներից: Այս սակագներն ապահովում են ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների լրիվ ծախսածածկման շուրջ 80%-ը:

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի համար ՀԾԿՀ-ն սահմանել է սակագների տարեկան ճշգրտման հստակ համակարգային գործընթացներ և բանաձևեր՝ գնաճին (սպառողական

գների ինդեքսին) և էլեկտրաէներգիայի գների փոփոխություններին համապատասխան: Վարձակալության պայմանագրով սահմանվում են <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի գործառնությունների շրջանակի փոփոխության դեպքում ծախսերի և սակագների վրա ցանկացած ազդեցության գնահատման և ուսումնասիրության ընթացակարգեր:

Միաժամանակ պետք է նշել, որ վարձակալության պայմանագրի 8-րդ հոդվածով և 1-ին հավելվածով սահմանվում է, որ 2017-2031 թթ. ընթացքում <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն պետք է վճարի 89 մլրդ 749 մլն ՀՀ դրամ գումարի չափով վարձակալության վճար:

2.2 Միասնական վարձակալը հանրությանը պետք է տրամադրի ա) ծավալուն և համոզիչ ապացույց իրենց ծառայությունների և բարելավման աշխատանքների վերաբերյալ, բ) տեղեկատվություն սակագների սահմանման վերաբերյալ: Արձագանքել սպառողների բողոքներին՝ ԿՀՑ-ների կատարման վերաբերյալ:

Վարձակալության պայմանագրի 6-րդ հավելվածում սահմանված է բաժանորդների բավարարվածության վերաբերյալ ՀԿՑ CS3-ը (Ռազմավարությունում նշված ԿՀՑ-ները՝ կատարողական հիմնական ցուցանիշները, վարձակալության պայմանագրում նշված են որպես ՀԿՑ-ներ): Անկախ տեխնիկական աուդիտորը պետք է իրականացնի բաժանորդների բավարարվածության կարծիքի հարցում՝ <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի սպասարկման տարածքում ջրամատակարարման որակի վերաբերյալ: Բաժանորդների բավարարվածության մակարդակն անբավարար գնահատելու կամ նախկին տարիների հետ համեմատելի կամ ավելի ցածր լինելու դեպքերում նախատեսված են տույժեր:

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն ունի իր ծառայությունների և դրանց բարելավումների վերաբերյալ բաժանորդներին տեղեկացնելու ծրագիր: Գործում են բաժանորդների սպասարկման կենտրոնները՝ բոլոր խոշոր քաղաքներում, որոնք տեղեկատվություն են տրամադրում բնակչությանը իրենց հասցեներում ջրամատակարարման ծառայությունների վերաբերյալ:

2.3 Հանրային տեղեկատվական արշավներ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի ներդրումային պլանի և միասնական սակագների մասին՝ ընդգծելով, որ դրանք կապահովեն օպտիմալ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ:

ՋՏՊԿ-ն վարձակալության պայմանագիրը 2016թ.-ի նոյեմբերի 21-ին ստորագրելուց հետո իր ինտերնետային կայքում տեղադրված 56 հրապարակումների, հեռուստատեսությամբ և ռադիոյով տրված 6 հաղորդումների միջոցով հանրությանը տեղեկատվություն է տրամադրել՝ ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի, վարձակալության պայմանագրի, սակագների վերաբերյալ:

3.Գույքի կառավարում

3.1 *Միասնական վարձակալի կողմից գույքի արդյունավետ կառավարման իրականացում՝ պատշաճ ծառայություններ մատուցելու համար*:

Վարձակալության պայմանագրի 6-րդ հավելվածով սահմանված են վարձակալի հիմնական կատարողական ցուցանիշները (ՀԿՑ) և ներքին համեմատական ցուցանիշները (ՆՀՑ), մասնավորապես՝ պոմպերի, ջրագծերի, կոյուղագծերի և այլ ենթակառուցվածքների պահպանման ու վերանորոգման համար:

2017-2031թթ.-ի ժամանակահատվածում վարձակալը պետք է իրականացնի պարտադիր կապիտալ աշխատանքների ծրագիր (ՊԿԱԾ)՝ առնվազն 37 մլրդ 500 մլն ՀՀ դրամի (շուրջ 80 մլն ԱՄՆ դոլարի չափով):

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն պետք է հաշվետվություններ ներկայացնի ՀԿՑ-ների կատարման, ՊԿԱԾ-ի իրականացման, հիդրավլիկ մոդելների և ԱՏՀ (GIS) տեղեկատվական բազաների վերաբերյալ: Այս և մյուս համապատասխան հաշվետվությունները պետք է աուդիտի ենթարկվեն անկախ տեխնիկական աուդիտորի կողմից:

ԵԿԱԾ2-ի շրջանակներում ԱՋԲ-ի աջակցությամբ ստեղծվել է ՋՏՊԿ-ի աշխատակազմի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչություն, որը պետք է նաև վերահսկի <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ին վարձակալությամբ հանձնված գույքի կառավարումը:

3.2 ԿՀՑ-ների (ՀԿՑ) վերաբերյալ միասնական վարձակալի հաշվետվություններ:

Վարձակալության պայմանագրի 6-րդ հավելվածում սահմանվում են հետևյալ ՀԿՑ-ները՝

- ՀԿՑ QS1. Ջրամատակարարման շարունակականություն
- ՀԿՑ QS2. Մատակարարվող ջրի որակ
- ՀԿՑ CF1. Չհաշվառվող ջուր
- ՀԿՑ CS3. Բաժանորդների բավարարվածություն:

Անկախ տեխնիկական աուդիտորը կիրականացնի <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ՀԿՑ-ների կատարման ամենամյա աուդիտ:

ՋՏՊԿ-ի կողմից գույքի արդյունավետ կառավարման և վերահսկման ապահովում:

Ինչպես նշված է 3.1 կետում ԵԿԱԾ2 շրջանակներում ՋՏՊԿ-ում ստեղծվել է նոր գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչություն: ԱՋԲ-ն աջակցություն է ցուցաբերել ՋՏՊԿ-ին՝ նոր վարչության գործառույթները սահմանելու և պաշտոնների անձնագրերը մշակելու գործում:

3 ՈՒժեղացված կարգավորում և ինստիտուցիոնալ փոփոխություններ

4.1 Վերահսկել միասնական վարձակալի ԿՀՑ-ների (ՀԿՑ) կատարումը և բացահայտել թիրախների հնարավոր անհամապատասխանության պատճառները:

Վարձակալության պայմանագրի 6-րդ հավելվածում սահմանված ՀԿՑ-ների կատարման վերաբերյալ <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ներկայացվում են ամսական, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ: Այդ ՀԿՑ-ները նկարագրված են 3.2 կետում: Դրանք չկատարելու դեպքում <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի համար սահմանված են տույժեր: Վարձակալության պայմանագրի 3-րդ հոդվածի 3.8.1 կետով սահմանվում է, որ ՋՏՊԿ-ն իրավասու է լուծել <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի հետ կնքված պայմանագիրը, այդ թվում եթե պայմանագրային տարում վարձակալի կողմից կատարվել են 3 էական խախտումներ, որոնք հաստատվել են անկախ տեխնիկական աուդիտորի կողմից:

4.2 Միասնական վարձակալից պահանջել հիմնավորել բոլոր առաջարկվող պահպանման և վերանորոգման ընդլայնված աշխատանքները, հատկապես ստորգետնյա խողովակաշարերի մասով (ջրատարներ, կոյուղիներ և այլ հիդրոտեխնիկական կառուցվածքներ):

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն ՊԿԱԾ-ի շրջանակներում պետք է սահմանի իր ծախսերի բնույթը և նպատակը: <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն նշված ծախսերի բնույթը, նպատակը և դրանց հետ առնչվող գույքը սահմանելիս պետք է պահպանի սահմանված ընթացակարգը: ՋՏՊԿ-ն ուսումնասիրում և կարծիք է ներկայացնում ՊԿԱԾ-ի վերաբերյալ, այն ստանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում:

<<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն պետք է ներկայացնի ՊԿԱԾ-ի իրականացման հաշվետվություն, որտեղ տրվում է իր ծախսերի բացվածքն ըստ առանձին գույքի միավորների: Անկախ տեխնիկական աուդիտորը պետք է ուսումնասիրի նշված հաշվետվությունը:

4.3 ՋՏՊԿ-ի կարողությունների ամրապնդում՝ միասնական վարձակալի տարեկան կապիտալ ծախսերի առաջարկների գնահատման համար:

ՋՏՊԿ-ն, ԱՋԲ-ի օժանդակությամբ, մշակել է ծրագրերի ծախսերի հաշվարկի մեթոդաբանություն: Այն ավելի լայն կերպով կարող է կիրառվել ոչ միայն միասնական վարձակալի, այլ նաև համապատասխան կազմակերպությունների (այդ թվում ՄՖԿ-ների) կողմից առաջարկվող ծրագրերի համար: Ի հավելումն, այն կօժանդակի ՋՏՊԿ-ին՝ իրականացնելու իր գործառույթները <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ներկայացվող ՊԿԱԾ-ի հայտերի նախագծերի և առաջարկվող ցանկացած շրջանակի փոփոխության մասով, օրինակ՝ կեղտաջրերի մաքրման կայանների համար ներդրումների և ծախսերի գնահատման գործում: Այն նախատեսում է նաև փոփոխությունների հետ կապված ծախսերի և դրանցից բխող սակագնի ցանկացած փոփոխության դեպքում ՀԾԿՀ-ի հետ քննարկումները:

4.4 Ամրապնդել ՋՏՊԿ-ի կարողությունները՝ միասնական վարձակալի ԿՀՑ-ների (ՀԿՑ) կատարումը վերահսկելու և աջակցելու նպատակով:

Ինչպես արդեն նշվել է ԵԿԱԾ2-ի մասով ԱՋԲ-ի քաղաքականության պայմանի ապահովման արդյունքում, ստեղծվել է ՋՏՊԿ-ի աշխատակազմի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչություն: ՋՏՊԿ-ի կարողությունների ամրապնդումը՝ վարձակալի տարեկան կապիտալ ծախսերի գնահատման մասով նշված է 4.3 կետում:

Սույն 4.4 կետում ենթադրվում է ՋՏՊԿ-ի կարողությունների ամրապնդում աշխատակազմի նաև մյուս կառուցվածքային ստորաբաժանումների ամրապնդման միջոցով՝ վարձակալի ՀԿՑ-ների կատարումը վերահսկելու և աջակցելու նպատակով:

4 Տվյալների, կարողությունների և վերլուծության բարելավում

5.1 Ընդլայնել բնապահպանական մոնիթորինգը, տվյալների հաշվետվությունը և վերլուծությունը:

Բնապահպանական մոնիթորինգը, տվյալների հաշվետվությունը և վերլուծությունն ընդլայնելու նպատակով ՀՀ բնապահպանության նախարարությունը (այսուհետ՝ ՀՀ ԲՆ) իրականացնում է նաև հետևյալ գործողությունները.

ա) ՀՀ ԲՆ <<Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն>> ՊՈԱԿ-ի ամսական հաշվետվություններում ներկայացվում են նաև կոնկրետ գետային ավազանների ջրային մարմինների ցածր որակի դեպքեր:

բ) Միասնական վարձակալի կողմից սպասարկվող կեղտաջրերի մաքրման օբյեկտներից հեռացվող կեղտաջրերի մակարդակների վերաբերյալ ՀՀ ԲՆ

բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի տարեկան հաշվետվությունում նշվում են նաև այն օբյեկտները, որտեղ համապատասխան ստանդարտները չեն ապահովվում: Տեսչությունն այս արդյունքները համադրելու է վերը նշված ա) կետում տրված արդյունքների հետ, որպեսզի նշվեն այն կեղտաջրերի մաքրման օբյեկտները, որոնք պետք են պատասխանատու լինեն ջրային մարմինների ցածր որակի դեպքերի համար:

գ) Պետք է նշել, որ ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱՆ) <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ը տրամադրում է համապատասխան հաշվետվություններ՝ ջրի ցածր որակով պայմանավորված հիվանդությունների դեպքերի և դրանցից տուժած մարդկանց թվաքանակի վերաբերյալ:

ՋՏՊԿ-ի կողմից 2016թ.-ի հուլիսի 18-ին հավանության արժանացած Ջրային ոլորտի ներդրումների պլանավորման և գույքի կառավարման գործողությունների ծրագրով սահմանվում է, որ ՋՏՊԿ-ն կնույնականացնի տեղեկատվական հիմնական բացերը և կառաջարկի այդ բացերը լրացնելու մեխանիզմներ: Այն ներառելու է նաև աշխատանքներ համապատասխան մարմինների հետ, մասնավորապես՝ ՀՀ ԲՆ-ի և ՀՀ ԱՆ-ի հետ: Այդ աշխատանքները կարող են ներառել հետևյալը.

ա) ՀՀ ԲՆ <<Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն>> ՊՈԱԿ-ը իրականացնում է ջրային մարմինների որակի վերաբերյալ ուսումնասիրություններ, որտեղ արձանագրվում են թերությունները և սահմանվում են խնդիրները:

բ) ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ը վերլուծում է ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների արձանագրված դեպքերի միջև կապը՝ ջրամատակարարման և ջրահեռացման վատ կառավարմամբ պայմանավորված ռիսկերը՝ առողջության վրա ազդեցությունների վերլուծության և համապատասխան միջոցների ձեռնարկման նպատակով:

գ) ՋՏՊԿ-ն, շահագրգիռ կողմերի հետ, աշխատանքներ է իրականացնելու այս ուսումնասիրությունների համար ՄՖԿ-ների աջակցությունը ստանալու նպատակով: Ուսումնասիրությունների իրականացման մեկնարկը նախատեսվում է 2018թ.-ին, իսկ ավարտը՝ 2020 թվականին:

դ) Վարձակալության պայմանագրի շրջանակներում, <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ն պետք է մշակի և իրականացնի մաքրված կեղտաջրերի մոնիտորինգի պլան և ռազմավարություն, ինչպես նաև ամսական, եռամսյակային ու տարեկան կտրվածքով հաշվետվություն ներկայացնի իր ներքին համեմատական ցուցանիշ՝ ՆՀՑ ՕՏ3-ի վերաբերյալ (որը վերաբերվում է մաքրված կեղտաջրերի որակին): Անկախ տեխնիկական աուդիտորը կուսումնասիրի այդ ծրագիրը և <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի կողմից ներկայացված տվյալները՝ ՆՀՑ ՕՏ3-ի մասով:

ՀՀ ԲՆ-ն ամրապնդում է բնապահպանական տվյալները ուսումնասիրելու, վերլուծելու ու դրանք բնապահպանական ոլորտի քաղաքականության մշակման գործում օգտագործելու հետ կապված իր կարողությունները և մասնագիտական ունակությունները՝ ինտեգրելով օդի, ջրերի (այդ թվում ստորգետնյա) բնապահպանական ուսումնասիրություն իրականացնող և կոշտ թափոնների հետազոտությամբ զբաղվող ընկերությունները և իր տեղեկատվական ու վերլուծական կենտրոնները: Հետևողական աշխատանքներ է

իրականացնում ՀՀ ԲՆ <<Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն>> ՊՈԱԿ-ը:

5.2 Մշակել պրակտիկ ծախսեր-օգուտներ վերլուծության (ԾՕՎ) գործիքների լրակազմ՝ ջրամատակարարման ծառայությունների բարելավման բարձրարժեք տարբերակների գնահատման ու հիմնավորման, ինչպես նաև դրանց արդյունավետության բարձրացման համար:

Այս գործողությունը փոխարինվել է ՋՏՊԿ-ի՝ 2016թ.-ի հուլիսի 18-ին հաստատված Ջրային ոլորտի ներդրումների պլանավորման և գույքի կառավարման գործողությունների ծրագրով: Միաժամանակ պետք է բարելավել տվյալների բազային իրավիճակը:

Առկա է նաև ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման բարելավմանն ուղղված տարբերակների արդյունավետության և դրանց բազմակողմանի, հիմնավոր տվյալների պակաս: Ջրամատակարարման համար սահմանված են մանրամասնեցված ՀԿՑ-ներ, իսկ ջրահեռացման կառավարման և կեղտաջրերի մաքրման մասով՝ այդ տվյալները ամբողջական չեն: Որպես հետևանք, ներկայում ջրային ոլորտի ծրագրերի կառավարման և առաջնահերթությունների սահմանման նպատակով ԾՕՎ գործիքների կիրառումը գրեթե իրագործելի չէ: Փոխարենն առաջարկվում է առնվազն ծախսային արդյունավետության մոտեցում: ՋՏՊԿ-ի ջրային ոլորտի ծրագրերի ծախսերի հաշվարկի մեթոդաբանությունում սահմանվում է նման մոտեցման նախագիծ՝ առաջարկվող ծրագրերի առաջնահերթությունները որոշելու համար՝ հիմնվելով դրանց միավոր ծախսի արդյունավետության և այլ գործոնների ուսումնասիրության վրա, ինչպիսիք են ջրի որակի վրա ազդեցությունները և ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների մակարդակի կրճատումը: Այդպիսով, ջրային ոլորտի ներդրումների պլանավորման և գույքի կառավարման գործողությունների ծրագիրը կենտրոնանում է հատուկ գործողություններ առաջարկելու վրա, ինչպիսիք են վերը նշված 5.1 կետում սահմանված հետագա գործողությունները: Դրանք պետք է ներառեն նաև հետևյալը.

ա) ՀՀ ԲՆ <<Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից մշակված՝ կեղտաջրերի մաքրման որակի վերաբերյալ ուսումնասիրություններ: Մասնավորապես, դրանցով պետք է նույնականացվի, թե որտեղ է ջրահեռացման ոչ համարժեք կառավարումը և մաքրման ցածր մակարդակը հանգեցնում ջրի աղտոտման խնդիրների՝ բարելավված ջրահեռացման կառավարման և մաքրման կարիք ունեցող առաջնահերթ տարածքները բացահայտելու և միջոցներ ձեռնարկելու նպատակով:

բ) ՀՀ ԱՆ <<Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից արձանագրված ջրային գործոնով պայմանավորված հիվանդությունների դեպքերի միջև կապի վերլուծություն՝ ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի ոչ բավարար կառավարմամբ և տեխնիկական խնդիրներով պայմանավորված ջրի ցածր որակի՝ առողջության վրա ազդեցությունների նույնականացման և քանակական սահմանման նպատակով: Դա կարող է օգտագործվել առողջության վրա նման ազդեցությունների հետ կապված ծախսերը գնահատելու, այդ ազդեցությունների կարևորությունը ցույց տալու և դրանք նվազեցնելու համար անհրաժեշտ ներդրումների չափը հիմնավորելու նպատակով: Այս տվյալները կարող են օգտագործվել

նաև հնարավոր ծրագրերի մշակման գործում՝ բացասական ազդեցությունների նվազեցման մասով դրանց ակնկալվող օգուտները գնահատելու համար:

5.3 Մշակել ջրամատակարարման և ջրահեռացման բարելավման հիմնական օգուտների գնահատումների տվյալների բազա:

Փոխարինվել է ՋՏՊԿ-ի Ջրային ոլորտի ներդրումների պլանավորման և գույքի կառավարման գործողությունների ծրագրով:

5.4 Մշակել տեխնիկական և տնտեսական կարողություններ՝ ծախսեր-օգուտներ վերլուծության գործիքները կիրառելու և դրանց արդյունքները մեկնաբանելու համար:

Փոխարինվել է ՋՏՊԿ-ի Ջրային ոլորտի ներդրումների պլանավորման և գույքի կառավարման գործողությունների ծրագրով:

5.5 Մշակել տվյալներ և զարգացնել գիտելիքներ՝ համակարգերի և ՈԵՋ աղբյուրների վերաբերյալ, որպեսզի որոշել տարբերակները և ներդրումային ծրագրերում ներառվող միջոցառումների կարևորությունը:

Վարձակալության պայմանագրի 6-րդ հավելվածով սահմանվում են չհաշվառվող ջրի մակարդակի վերաբերյալ ՀԿՑ CF1: Վարձակալության պայմանագրով նախատեսվում է այս ցուցանիշի բարելավում 30%-ի չափով՝ մինչև 2031թ.-ը:

Աղյուսակ 4.2. Իրավական և կարգավորման բարեփոխումների իրականացման գործողությունների պլան

1. Ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման ոլորտի ուսումնասիրություն և դրա արդյունքում իրավական ակտի նախագծի նախապատրաստում:

2015 թվականի սեպտեմբերին ԱՋԲ խորհրդատուները հաշվետվություն են նախապատրաստել ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման հետ կապված հիմնախնդիրների վերաբերյալ:

Հաշվետվությունում ներկայացվել են գլխավոր սկզբունքները, հիմնավորող տվյալները և հստակեցվել են այն ուղղությունները, որոնց մասով անհրաժեշտ են բարելավումներ:

Արդյունքում, ԱՋԲ-ի խորհրդատուները առաջարկել են համապատասխան իրավական ակտերում կատարել փոփոխություններ:

Ելնելով ԱՋԲ-ի ԵԿԱԾ2-ի քաղաքականության պայմանից, ՀՀ բնապահպանության նախարարի 2016 թվականի ապրիլի 22-ի N 97-Ա հրամանով ստեղծվեց միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ոլորտում իրավական հարաբերությունների կարգավորումը բարելավելու նպատակով: Այս աշխատանքային խմբում ներգրավվել էին շահագրգիռ նախարարությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ, մասնավորապես՝ ՀՀ ԲՆ, ՋՏՊԿ, ՀԾԿՀ, Երևանի քաղաքապետարան, <<ՋԻՆՋ>>, <<Հայջրնախագիծ ինստիտուտ>> կազմակերպությունների, ինչպես նաև ԱՋԲ-ի ներկայացուցիչները:

Աշխատանքային խումբն ուսումնասիրել է ԱՋԲ-ի կողմից առաջարկված թվով 10 իրավական փոփոխությունները, որոնք ներառում են կարևոր խնդիրներ և որոնց լուծումը պահանջում է համապատասխան ժամանակ ու ներդրումներ:

ՀՀ ԲՆ-ի կողմից նախապատրաստվել է <<Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ:

2.

1) Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների, լիցենզավորված անձանց և բաժանորդների միջև կնքվող՝ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերի կամ պարտադիր պայմանների սահմանում:

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՕ-108-Ն օրենքի պահանջները, 2016 թվականի նոյեմբերի 30-ին ՀԾԿՀ-ն ընդունեց <<Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին>> N378Ն որոշումը: Շահառուների հետ քննարկումների արդյունքում ՀԾԿՀ-ի կողմից 2017 թվականի հունիսի 14-ին ընդունվեց նաև <<Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N378Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> N247Ն որոշումը: Փաստորեն, ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ մատուցման կանոններում կատարվեցին համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ հաշվի առնելով բաժանորդներից ստացված առաջարկություններն ու բողոքները: Այս գործընթացը լինելու է շարունակական՝ ծառայություններ մատուցողի և բաժանորդների շահերի հավասարակշռման նպատակով:

Մատակարարի և բաժանորդի միջև կնքվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը սահմանված են ՀԾԿՀ-ի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N 379Ն որոշմամբ:

2) ՀՀ կառավարության 2004թ.-ի հունվարի 22-ի N130-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու (կամ դրանում փոփոխություն կատարելու) վերաբերյալ առաջարկության ներկայացնելը:

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՕ-108-Ն օրենքի պահանջները, հաշվի առնելով ՀԾԿՀ-ի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N378Ն որոշումը, ՋՏՊԿ-ի ներկայացմամբ ընդունվել է ՀՀ կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի <<Հայաստանի հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի N130-Ն ուժը կորցրած ճանաչելու և խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործման կարգավորման, խմելու ջրի մատակարարման համակարգերից խմելու ջրի ապօրինի սպառումը և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործումն արձանագրելու մասին>> N658-Ն որոշումը:

3.

1) Համայնքների քառամյա զարգացման պլանում՝ որպես պարտադիր տեղեկատվություն, ներառել համայնքների ջրամատակարարման և ջրահեռացման վերաբերյալ իրենց մոտեցումները (հիմնադրույթները):

Այս հարցը ներառված է ԱԶԲ-ի կողմից նախապատրաստված իրավական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների փաստաթղթում, որին աշխատանքային խումբն ընթացք չի տվել:

ԱԶԲ խորհրդատուները այս առաջարկությունները քննարկել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ (այսուհետ՝ ՀՀ ՏԿԶՆ): Հարցի ամբողջական կարգավորումը դիտարկվում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի շրջանակներում:

2) ՀՀ օրենքի նախագծի նախապատրաստում՝ <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում կատարել լրացում՝ միջհամայնքային միավորումների գործունեությունը կանոնակարգելու համար (մասնավորապես՝ խնդիրների, իրավասությունների, կառուցվածքի վերաբերյալ):

Միջհամայնքային միավորումների գործունեությունը դեռևս լիովին կանոնակարգված չէ: Ներկայում իրականացվում է համայնքների խոշորացման գործընթաց, որը նպատակաուղված է համայնքների զարգացմանը, հնարավորությունների համախմբմանն ու գործունեության արդյունավետության բարձրացմանը, համայնքային խնդիրների լուծմանը:

Եզրակացություն

Հաշվի առնելով սույն հաշվետվությունում բերված Ռազմավարության հիմնադրույթների իրականացման արդյունքները, հիմնավորումներն ու վերլուծությունները առաջարկվում է Ռազմավարությունում կատարել համապատասխան փոփոխություններ՝ այն արդի պահանջներին համապատասխանեցնելու նպատակով: